սօրեայ եւլին յաշխարհէ» *։ Ցեթե ստույգ է նախընթաց ծանոթության մեջ մեր արած նկատողությունը իշխանական պատկերների մասին, Խութլու խաթունի մահը պետք է դնել 1258 – 1268 թ. թ. մեջ. այս յենթադրությունը գրեթե դառնում է հաստատուն, յեթե ի նկատի ունենանք Ս Աստվածածնի հետևյալ արձանագրությունը, վոր ինչպես կտեսնենք, նորոգության շրջանին է պատկանում։

«Ես Ազիզս մնեալ ի տան Խութլու խաթունին եւ Պռոշոյ էտ․Ի ։ դեհեկան / եւ սպասաւորքս խոստացան ի տարին ։ ա։ աւր ժամ, որ խափանէ մեղացն (մեր մեղացն?) պարտկն է» **։

Տղայության հասակում մեռած Մկդեմի և Փոհար խաթունի, ինչպես և 1268 թվին դեռ ևս կենդանի Վասակի մասին, չունինք վոչ մի տեղեկություն. չպետք է շփոթել սորան Գրիգոր Խաղբակյանի և Ջագի նույնանուն վորդու հետ։ Պռոշի վորդի Վասակի մահը պիտի հանդիպած լինի 1268 - 1273թ. թ. մեջ․ վերջին թվին, երբ շինվեցավ Թանահատի վանքը, Վասակն այլ ևս չի հիշատակվում կենդանի վորդիների շարքում, մինչդեռ Պռոշի թոռը և Հասանի վորդի Էաչին, վոր մանուկ եր այդ ժամանակ, հիշված է։ Պռոշի վորդիների մասին հիշում է և Խաչատուր Կեչառեցին յուր վերոհիշյալ Ողբի մեջ, վորպես շարունակություն Պռոշին նվիրած քառատողին, վոր մեջ բերինք արդեն.

«և զկուր (Պռոշի) որդիքըն զարմանալի
Մըկդէմ, զՎասակ, զկորիւնքն աւիւծի.
զայն զաւրաւորն ի պատերազմի՝
զԱմիր Հասնայ բազուկն քաջի»։

Այստեղ չե հիշված Պապաքը, վորովհետև Ողբի գրած ժամանակ կենդանի եր նա, իսկ հեղինակը վողբում է միայն մեռած իշխաններին։ Սրանցից վերջինը Ամիր – Հասանն է, վոր վախճանվել է 1292 թվին, վորով և հնարավորություն ունինք Ողբի ծագման terminus post quem-ը վորոշելու, իսկ terminus ante quem կարելի է Պապաքի մահը նշանակել, վոր ինչպես կտեսնենք, պատահեցավ 1298/9 թվին [1]։

Պռոշի շինած վիմափոր տաճարները յերկուս են, մուտքերը սրբատաշ քարով տաճարի գավթի հյուսիսային կողմից։ Մենք արդեն հիշել ենք, հետագայում առիթ



Խաչքարանդակ Պռոշի վիմափոր գավթում. **Պատկեր 34.**

կունենանք ավելի մանրամասն պարզելու, թե սրբատաշ քարով շինված բուն տաճարն ու նորա սյունազարդ մեծ գավիթը Պռոշից առաջ են շինված. նրա ստեղծագործությունները են միայն միակտուր ժայռի մեջ կերտված, նրանից գմբեթարդ տաճարը յուր գավթի հետ, և մի յերկրորդ ժամատուն, սրանցից դեպի արևմուտք, առանձին մուտքով։ Այս յերեք շենքերը ընկ-

* Զարմանալի թյուրիմացությամբ Ալիշան (Այրարատ. 269) յերեք յեղբայրներին մեռած է համարում 1268 թվից առաջ այս արձանագրության հիման վրա, և նույնը կրկնում է Տաշեան. Ուսումնասիրութիւն Ստոյն Կալիսթենեայ. 126։

** Աստվածածնի արձանագրությունները մեջ կբերենք Բ. մասի Բ. գլխի մեջ։

1 Ողբի ամբողջությունը տ. Հավել. Գ. 1։